«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Հաստատություն՝ Արտաշատ քաղաքի թիվ 8 մանկապարտեզ

Դաստիարակ՝ Տաթևիկ Գրիգորյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն----------3

Թեմա- Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների

զարգացման գործում----------4

1. Էքսկուրսիան որպես ուսուցման կազմակերպման ձև, նրա նշանակությունը
2. Էքսկուրսիաների նպատակը և մշակութային այցերի դերը նախադպրոցական տարիքում
3. Էքսկուրսիայի անցկացման մեթոդիական

Եզրակացություն, առաջարկություն

Գրականության ցանկ

Ներածություն

Մինչ դպրոցական սիստեմի վերակառուցման մասին օրենքը, էքսկուրսիաները մեծ մասամբ անց էին կացվում բնությանը, արտադրությանը ծանոթացնելու նպատակով: Օրենքի հրատարակումից հետո ավելի քան երբևէ, բարձրացավ էքսկուրսիայի դերը:Այժմ ուսուցումը կյանքի հետ կապելու, դասավանդման մեթոդներն ու ձևերը կատարելագործելու և ակտիվացնելու նոր պահանջներից ելնելով՝ նախադպրոցականն տարիքի երեխաների կրթական ծրագրերի բովանդակությունը ներառում է հետևյալ ոլորտները՝

1. Շարժողական ոլորտ (Շ)
2. Խոսքի և հաղորդակցական ոլորտ (ԽՀ)
3. Հուզական, սոցիալ-անձնային ոլորտ (ՀՍԱ)
4. Իմացական ոլորտ (Ի)
5. Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ (ԻԱԱ),

դիտվում է որպես ուսուցման կազմակերպման մի յուրահատուկ ձև, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց:Գիտելիքի հաղորդումը կարելի է կատարել պարապմունք-էքսկուրսիաների միջոցով՝ նկատի ունենալով,որ
այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում, իսկ պարապմունքն ավելի աշխույժ ու հետաքրքիր է անցնում:

Էքսկուրսիաները այցելություն է դեպի տեսարժան վայրեր, թանգարաններ, բնություն՝ ուսումնական, կրթամշակութային նպատակներով: Այն ինչ երեխաները տեսնում են, տպավորվում է նրա գիտակցության մեջ:

Թանգարանները դաստիարակչական և կրթական մեծ դեր են կատարում մեր սերունդներին փոխանցելու պատմամշակութային ժառանգությունը

1. Էքսկուրսիան որպես ուսուցման կազմակերպման ձև, նրա նշանակությունը

ա)**Էքսկուրսիայի անհրաժեշտության հոգեբանական մանկավարժական հիմնավորումը**:

Հիմք ընդունելով այն, որ օբյեկտիվ իրական
աշխարհի ճանաչողությունը սկսվում է զգայությունից, ուսուցման պրոցեսում մեծ տեղ է տրվում էքսկուրսիային:

Իրական
աշխարհի զգայություններն ու ընկալումները համապատասխանորեն իմաստավորվում և վերամշակվում են մեր գիտակցության մեջ: Մեր աչքին միանում

են մյուս զգայարանները և մտածողության գործունեությունը:Զննական ընկալումը հեշտացնում է երեխաների գիտելիքների յուրացման պրոցեսը: Քանի որ երեխաների մտածողությունը զարգանում է կոնկրետից դեպի վերացականը, ուստի զարգացման վաղ էտապներում նրանք մտածում են ավելի շատ պատկերներով, քան հասկացողություններով:
Հասկացողությունները նվերացական գաղափարները սովորողի գիտակցությանն ավելի հեշտ են հասնում,եթե դրանքամրապնդվում են
կոնկրետ փաստերով, օրինակներով ու պատկերներով:Այսպեսայլ ձևով է ընկալվում և մտապահվում առարկան կամ երևույթը ցուցադրմամբ, այլ ձևով՝ նկարագրությամբ: Էքսկուրսիոն մեթոդը օգտագործվում է նախադպրոցական կյանքի տարբեր բնագավառներում և հետապնդում է ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական նպատակներ:

Էքսկուրսիան դաստիարակին հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապվածությունը և մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը:
Այս ամենը նպաստում են երեխաների մատերիալիստական աշխարհաճանաչողության ու դիտողականության զարգացմանը, նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի շրջապատը, ամրապնդում են նրանց գիտակցական կարգապահությունը, սեր են արթնացնում դեպի բնությունը, հոգատար վերաբերմունք են դաստիարակում շրջապատի ու ընդհանրապես հայրենի երկրի բնության նկատմամբ:

Ինչպես հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խ. Աբովյանն է նկատել՝(<<Երկերի լիակատար ժողովածու>>) բնությունն իր բազմապիսի առարկաներով ու երևույթներով, իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային զանազան կապերով, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է, մի ուսուցիչ, որ ամենից հեշտ ու դյուրին ձևով, խոր ու կայուն կերպով սովորեցնում է մարդկանց բնությունը ճանաչել: Ահա թե ինչու ուսուցման պրոցեսում, լայնորեն պետք է օգտագործել էքսկուրսիաները, որպես ուսուցման միջոց, որպես շրջապատի բնությունն ուհասարակությունը ճանաչելու, շրջապատի մասին ռեալ գիտելիքներ հաղորդելու եղանակ:

բ)**Էքսկուրսիայի կրթադաստիարակչական նշանակությունը**

Էքսկուրսիաներըընդլայնումեն
երեխաների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով, անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք մանկապարտեզ բերել հնարավոր չէ, հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը,

կենդանիները, մարդկային հասարակությունը և մարդու աշխատանքը բնության և հասարակության մեջ:

Բնության անզուգական գեղեցկություններին, արվեստին և նրա ուղղություններին և ընդհանրապես ողջ շրջապատող իրականության հետ անմիջական շփման, հաղորդակցման առավել տպավորիչ ու մնայուն միջոցներից են էքսկուրսիաներն ու զբոսանքները:

Էքսկուրսիաներն կոչված են արթնացնել երեխաների հետաքրքրությունները և խթանելու նրանց ստեղծագործական ակտիվությանը:

Այդ ժամանակ է, որ երեխաների առաջ բացվում է շրջակա աշխարհի գեղեցկությունը, նրանց մեջ արթնացնելով ուրախություն և հիացմունք: Իսկ գեղեցիկի նկատմամբ մարդ տպավորություն է ստանում, երբ զգում է դրանք:

Էքսկուրսիաների ժամանակ երեխայի բարոյագիտության դրսևորումն կայանում է նրանում, որ գեղեցիկի ճանաչումը առաջացնում է անհանգստություն՝ գեղեցիկը չկորցնելու, և ձգտում՝ շրջապատն ավելի լավ դարձնելու, քան այն կա:

Էքսկուրսիաների ժամանակ դաստիարակը պետք է ամեն ինչ անի, որ երեխաները լինեն ուշադիր, հասկանան, թե ինչ թեմայով է կազմակերպված էքսկուրսիան: Եվ կարողանան պատմեն տպավորությունների, ձեռք բերված գիտելիքների մասին:

Ոստի, էքսկուրսիաներից ստացած արդյունքը մեծ մասամբ կախված է դրա կազմակերպման որակից, ինչպես նաև այն հանգամանքից, թե դաստիարակը որքանով է հետաքրքիր և օգտակար դարձնում այն:

Էքսկուրսիաները պետք է լինեն նպատակային, տարիքային առանձնահատկություններին համապատասխան և դրա շրջանակներում պետք է հաշվի առնել երեխաների հետաքրքրասիրությունները: Որպեսզի էքսկուրսիաները ունենան իրենց բավարար արդյունքը, պետք է դաստիարակը զրույց տանի թեմայի շուրջ:

Էքսկուրսիաների կազմակերպումը հարստացնում և ուժեղացնում է երեխաների դիտողականությունը և ստեղծագործական երևակայությունը, հնարամտությունը, ձևավորում երեխաների գեղագիտական ճաշակը:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման և համար: Ինչպես հայ նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանն էր ասում. <<Ուսուցման մեջ առաջ ինը և կարևորը դիտողությունն է, երեխայի առաջին դիտողությունները վարժեցնում են նրա զգայարանները, իսկ զգայարանն այն դուռն է, որով արտաքինը մտնում, թափանցում է ներքին աշխարհը, ինչ-որ չի անցնում զգայարաններով, նա առհասարակ չի մտնում հոգու մեջ, ուստի միշտ ուսուցման պրոցեսում նախ պետք է երևան գա գաղափարը, իսկ հետո՝ բառը: Միայն այդպես կարելի է դիտողությամբ մշակել լեզուն, իսկ լեզվով՝ հոգին ու միտքը>>:

Գրեթե նույն կարծիքն է հայտնել նաև ռուս մեծ մանկավարժ ՈՒշինսկին (Адамов ич - "Объяснительное чтение в начальной школе". Москва, 1948г. стр. 4 Ушинский - "Собрание сочинений ".1948г.стр.333).

Նա գտնում էր, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե մտքի, առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի: ՈՒ մի ձևով հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որ քան էքսկուրսիայի միջոցով, որովհետև այստեղ բառը կապվում է տվյալ հասկացության, իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ, դառնում է կոնկրետ ու որոշակի:

Էքսկուրսիան լավագույն նյութ է տալիս խոսքի զարգացման ու մշակման համար: Փորձը ցույց է տալիս, որ երեխաները ամենից ավելի հաջող պատմում են էքսկուրսիաների մասին, որո վհետև նյութի կոնկրետությունն ու տպավորությունների անմիջականությունը հնարավորություն են տալիս կառուցվածքով կուռ, բառապաշարով հարուստ և լեզվառճական տեսակետից անթերի պատմվածք կազմելու:

Պետք է նկատել, որ էքսկուրսիայի ընթացքում ոչ միայն նախատեսված առարկաներն ու երևույթներն են դիտվում, այլ բազմաթիվ այլ նյութեր են հավաքվում (հերբարումներ ու հավաքածուներ կազմելու համար և այլն):

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում են ուշադրություն ու դիտողունակություն, մշակում են գիտակցական կարգապահություն ու կազմակերպվածություն՝ մանկապարտեզից դուրս իրենց պահելու դաստիարակի հրահանգները ճիշտ ժամանակին, ճիշտ ու անթերի կատարելու ունակություն:

Էքսկուրսիաների միջոցով երեխան ծանոթանում է երկրի մակերևույթի ձևերին, զգում հայրենի բնության գեղեցկությունը և ամենից շատ սիրում ու գնահատում այն: Էքսկուրսիայի ժամանակ զարգանում է նաև երեխաների էսթետիկական ճաշակը, նրանք կարողանում են գեղեցիկը տեսնել ամեն տեղ՝ բնության մեջ, կյանքում և աշխատանքում:

Մի անգամ, որոշեցի կազմակերպել էքսկուրսիա՝ <<Աշնան այգում>> թեմայով:

Օրը շատ պայծառ ու արևոտ էր: Մենք մտանք մանկապարտեզի այգի: Երեխաները աշխույժ և ուրախ տրամադրության մեջ էին: Աշնան գեղեցկությունը գրավել էր նրանց ուշադրությունը: Նրանք այնքան բազմերանգ տերևներ էին հավաքել, որ չէին կողմնորոշվում, թե որը դնեն թղթապանակի մեջ, որն է ավելի գեղեցիկ: Նրանք նայում էին քամուց <<պարող >> տերևներին, նայում ծառերի բներում հավաքված տերևակույտերին, կարծես ցանկանում էին բոլորն էլ ունենալ իրենց մոտ: Նրանք չէին

կարողանում իրենց զգացմունքը թաքցնել և մեկը մյուսի հետից մոտենալով ինձ ասում էին.

- Այս մեկն էլ ուրիշ գույնի է, ընկեր Տաթև:

կամ

- Այս տերևն ունի մի քանի գույներ:

Էքսկուրսիայի ընթացքում ձևավորվում են շատ բարոյական նորմեր՝ ընկերասիրություն, կոլեկտիվիզմ, փոխօգնություն և այլն:

Էքսկուրսիայի ժամանակ երեխաները ձեռք են բերում բնավորության այնպիսի գծեր ինչպիսիք են հաստատակամություն, համառություն, դժվարությունները հաղթահարելու կամք:

Էքսկուրսիայի ժամանակ բացահայտվում է երեխայի բնավորությունը, նրա շատ ընդունակություններ ի հայտ են գալիս: Այսպես օրինակ՝ երբ ես սովորում էի վեցերորդ դասարանում, մեր դասարանում կար մի աղջիկ, որին բոլորը չէին սիրում: Նա ոչ մի զրույցի, ոչ մի միջոցառման, ոչ մի բանավեճի չէր մասնակցում: Նրա անունը Աննա էր, բայց մենք նրանք <<պասիվ >> էինք

կոչում: Մի օր էլ էքսկուրսիա կազմակերպեցինք դեպի << Գեղարդ>>:

Վանքը մտնելուց ու դիտումները վերջացնելուց հետո՝ մենք մտանք մոտակա այգի: Ճաշեցինք ու սկսեցինք երգել ու պարել: Հենց առաջինը նա պարեց՝ ստեղծելով մեզ ապշեցնող մի ուրախ մթնոլորտ: Նա կատակներ էր անում, արտասանում: Այդ օրվանից չնայած դասարանում էլի նույն <<պասիվ>> Աննան էինք տեսնում, բայց նա մեզ հիշեցնում էր այն ժիր ու կատակասեր աղջիկը:

Էքսկուրսիայից ստացած տպավորությունները ավելի անմիջական են և պահպանվում են ավելի երկար: Օրինակ՝ կրտսեր խմբի երեխաների գիտելիքները ավելի կայուն դարձան այն բանից հետո, երբ կազմակերպեցի էքսկուրսիա և բացատրեցի Արտաշատի լճի հունը, աջ և ձախ մասերը և այլն:

Էքսկուրսիայի ժամանակ շատ երևույթներ երեխաները կարող են տեսնել, բայց չհասկանալ, այս գործում մեզ օգնության է գալիս դաստիարակի բացատրությունը, որը կարող է ինչպես նախորդել, այնպես էլ զուգակցել ու հաջորդել էքսկուրսիային: Գիտելիքների ընկալմանը հաջորդող էքսկուրսիան նպաստում է երեխաների նախօրոք ստացած գիտելիքների ամրապնդմանը, իսկ թեմային նախորդող էքսկուրսիան հիմք է հանդիսանում նոր գիտելիքների ընկալման համար, երեխաները նախնական տվյալներ են հավաքում այս կամ այն թեման յուրացնելու համար:

2. *Էքսկուրսիաների նպատակը և մշակութային այցերի դերը նախադպրոցական տարիքում*

Չի կարելի երբեք էքսկուրսիայի անցկացմանը երկրորդական նշանակություն տալ, լրացուցիչ կամ ավելորդ աշխատանք համարել, դիտել որպես դաստիարակության պրոցեսին օժանդակ միջոց: Ծրագրով նախատեսվում է նախադպրոցական տարիքում անցկացնել հետևյալ էքսկուրսիաները. ԻՇԱ-ի (ինձ շրջապատող աշխարհը) ընթացքում (կրտսեր խմբում) պետք է կազմակերպել էքսկուրսիա՝ գաղափար տալու ամռան և աշնան մասին, <<Ինչպե՞ս են անցկացրել երեխաները ամառը>>, աշնան նշանները՝ եղանակի ցրտում, տերևների գունափոխում, տերևաթափ, թռչունների չուն, աշնանային աշխատանքները մանկապարտեզի տարածքում, ճանաչել և ճշգրիտ անվանել տվյալ վայրի համար բնորոշ 2-3 տեսակի ծառեր: Անցկացնել էքսկուրսիաներ՝ իրենց բնակավայրերը և հայրենի բնությունը ուսումնասիրելու համար: Դեպի բնություն կատարվող էքսկուրիաների թեմաներ կարող են լինել՝

ա)մանկապարտեզի շրջակայքը ,

բ)իրենց փողոցը(քաղաքում), հայրենի գյուղը և այլն:

գ)Դեպի բանջարանոց՝ բանջարանոցային բույսերի և բանջարեղենների բերքահավաքին, բանջարանոցի մոլախոտերին և նրանց ոչնչացման ձևերին ու միջոցներին ծանոթանալու համար (աշնանը):

դ)Դեպի անտառ անտառի ծառերին, թփերին ու անտառի բնակիչներին ծանոթանալու նպատակով:

ե)Դեպի երեխաների բնակված թաղամասը կամ գյուղը՝ մարդկանց աշխատանքային գործունեության վերաբերյալ երեխաների պատկերացումներն ընդարձակելու համար:

զ)Դեպի հրուշակեղենի արտադրամաս՝ աշխատանքային պրոցեսին ծանոթանալու համար:

է)Դեպի փոստային բաժանմունք, կապի միջոցների, աշխատողների, ամսաագրերի մասին գաղափար տալու համար:

ը)Դեպի կայարան՝ երկաթուղային տրանսպորտի աշխատանքին ծանոթանալու համար:

թ)Փայտամշակման արհեստանոց՝ փայտամշակման մեքենաների, գործիքների, այնտեղ պատրաստվող առարկաների(ի՞նչ է պատրաստվում և ու՞մ համար) և մարդկանց աշխատանքի մասին գաղափար տալու համար:

ժ)Դեպի իրենց բնակավայրի տեսարժան վայրերը՝ հայրենի երկիրը ճանաչելու և սիրելու համար:

ի)Պարապմունքներ բնության գրկում՝ տեղանքի ուսումնասիության և կողմնորոշման ուղղությամբ.

Մանկապարտեզում անցկացնել էքսկուրսիա հետևյալ թեմաներով.

1.Մոտակա ցորենի արտ՝ հացահատիկային կուլտուրաներին, մոլախոտերի և դաշտային աշխատանքների մասին գաղափար տալու համար:

2.Արտաշատյան լիճ՝ լճի աջ և ձախ ափերին, հոսանքի բնույթի, ակունքի մասին երեխաներին գաղափար տալու համար:
3.Այգի՝ պտղատու ծառերի, թփերի և այգում կատարվող այգեգործական աշխատանքների մասին գաղափար տալու համար:
4.Մոտակա դպրոցներ և գրադարաններ
5.Պատմական հուշարձանները՝ տվյալ վայրում եղած պատմական հուշարձաններին ծանոթացնելու համար:
Մանկապարտեզներն ունեն հատուկ ծրագիր, ըստ որի երեխաներին պետք է ծանոթացնել հայ մշակույթի տարբեր հուշարձանների, տարբեր գործիչների հետ, իհարկե, իրենց մտածելակերպին ու տարիքային չափորոշիչներին համապատասխան:
Երեխան ծանոթանում է արվեստի արժեքների հետ մանկապարտեզում, որը երեխաներին ստեղծագործելու հնարավորություն է տալիս: Երեխան սովորում է պատկերել և հասկանալ գեղեցիկը, հաճախ այցելում են թանգարաններ կամ որևէ մշակութային հուշարձաններ:
Երեխաներն ամենաուշադիրը լսում են հենց արվեստի մասին զրույցները ու մեծ հաճույքով են կատարում իրենց տրված հանձնարարությունները: Ինչպես դրվեց հիմքը, այնպես էլ կշարունակվի, իսկ ամեն ինչի հիմքը դրվում է մանկապարտեզում: Այցելություն թանգարան, երկար է մնում երեխաների հիշողության մեջ: Թանգարաններն ավելի ու ավելի մեծ դեր է խաղում մարդու կրթության և դաստիարակության գործում: Երեխաներին պետք է թանգարաններ տանել ավելի վաղ, քան նրանք կսկսեն քայլել:
Գեղագիտական դաստիարակությունը, սերն ու հարգանքն է գեղեցկության նկատմամբ: Որքան խորն է գեղագիտական ընկալումը, այնքան ամուր է մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը:

3. ***Էքսկուրսիայի անցկացման մեթոդիկան***

Էքսկուրսիայի ճիշտ անցկացումը դաստիարակից պահանջում է էքսկուրիայի նպատակի և բովանդակության ճիշտ պլանավորում, կազմակերպում և ստացված արդյունքների ամփոփում: Այդ տեսակետից էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ ուշադրություն պետք է դարձնել նրա երեք հիմնական փուլերի վրա՝
1.Նախապատրաստում
2.Անցկացում
3.Ամփոփում
ա)Էքսկուրսիայի նախապատրաստումը.
Յուրաքանչյուր էքսկուրսիա որոշակի նպատակ պոտք է ունենա, նպատակ, որը պետք է բխի մանկապարտեզի ծրագրի առաջադրած խնդիրներից ու պահանջներից: Էքսկուրսիայի նպատակը և օբյեկտը պետք է կոնկրետ ու որոշակի

լինի, որպեսզի ըստ այդմ էլ պարզ լինի , թե էքսկուրսիայի ընթացքում երեխաները ինչ գիտելիքներ են ստանալու, ինչ նյութեր ուսումնասիրելու կամ հավաքելու, ինչ գործնական աշխատանքներ են կատարվելու և ինչի համար, երբ և ինչպես է անցկացվելու էքսկուրսիան: Երբ այսքանը արդեն դաստիարակի համար պարզ է և նա գիտի, թե ուր է էքսկուրսիա տանելու, երբ և ինչ նպատակով, կարող է որոշակիորեն պատկերացնել, թե ինչ հարցերի շուրջ հարկ կլինի խոսել էքսկուրսիայի ժամանակ, ինչ գիտելիքներ պետք է տա երեխաներին, ըստ երեխաների տարիքային չափորոշիչների և ինչ չափով, ուստի ըստ այդմ էլ նա հաշվի կնստի ինքն իր հետ, թե նա ինչ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրություններ անցկացնելու կարիք ունի:

Յուրաքանչյուր էքսկուրսիայի նպատակը որոշելուց հետո պարտադիր կարգով դաստիարակը պետք է վերստին մանրամասնորեն ուսումնասիրի այդ թեման, թարմացնի ու լրացնի իր գիտելիքները այդ թեմայի վերաբերյալ, որպեսզի կարողանա երեխաներին բավարար չափով տեղեկություններ տալ տվյալ օբյեկտի մասին, ճիշտ ու պարզ պատասխաններ տալ էքսկուրսիայի ընթացքում ծագած հարցերին: Նյութերի ուսումնասիրությունից հետո պետք է կատարել էքսկուրսիայի վայրի ընտրություն, որոշվի ընթացքը և դեպի էքսկուրսիա տանող նպատակահարար ճանապարհը:

Այսպիսի նախնական ուսումնասիրությունից հետո դաստիարակը կարող է կազմել էքսկուրսիայի պլանը, որը կարևոր նշանակություն ունի հետագա աշխատանքների ճիշտ կազմակերպման համար:

Պլան կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական հարցերը.

1.Էքսկուրսիայի թեման

2.Այն գիտելիքների համառոտ շարադրանքը, որ երեխաները պետք է ստանան էքսկուրսիաների ընթացքում:

3.Էքսկուրսիայի ընթացքն ու հաջորդականությունը, էքսկուրսիայի ընթացքում շոշափվող հիմանական հարցերը, երեխաներին տրվելիք խմբային կամ անհատական աշխատանքի առաջադրանքները:

4.Էքսկուրսիայի վերջում անցկացվող ամփոփիչ զրույցի համառոտ բովանդակության շարադրումը:

5.Էքսկուրսիայի կահավորումը՝ հանդերձանքը, գործիքները և այլն:

Օրինակ կարելի է կազմել աշնանը վերաբերվող էքսկուրսիայի այսպիսի պլան.

Էքսկուրսիայի թեման- աշուն

Էքսկուրսիայի նպատակը – գաղափար տալ աշնան մասին , սովորեցնել

Ճանաչել ու զգալ բնության մեջ կատարվող եղանակային փոփոխությունները:

Էքսկուրսիայի նախապատրաստում- բացատրել էքսկուրսիայի նպատակը և երեխաներին շարք կանգնեցրած տանել էքսկուրսիայի վայրը՝ մանկապարտեզի բակը կամ մանկապարտեզից ոչ շատ հեռու:

Էքսկուրսիայի անցկացում – Էքսկուրսիայի վայրը հասնելուց հետո թույլ տալ , որ երեխաները կանգնեն ինչպես որ կամենում են, և հանձնարարել , որ դիտեն շրջակայքը: Մի քանի րոպեից հետո հարցերի միջոցով վեր հանել նրանց տեսածն ու զգացածը:

-Ի՞նչ եք զգում (ցուրտ է, փչում է սառը քամի, տերևները թափվում են և այլն):

-Ինչպիսի՞ն է երկինքը (այն ծածկված է ամպերով, մշուշ է, արևը չի երևում):

-Ծառի վրա շա՞տ տերևներ կան , թե՝ քիչ, ի՞նչ են եղել նրանք:

-Այժմ տարվա ո՞ր եղանակն է:

-Որո՞նք են աշնան նշանները:

Էքսկուրսիայի ամփոփում – վերջին հարցի պատասխանն էլ կլինի էքսկուրսիայի ամփոփումը: Այդ հարցին պատասխանելու համար երեխաներին օգնել իրենց դիտումների ու զգացածի վերաբերյալ կոնկրետ եզրակացություններ անելու՝ փչում է ցուրտ քամին, ծառերից թափվում են տերևները, արևը չի երևում, երկինքը ծածկված է ամպերով…- դա աշունն է:

Էքսկուրսիայից մեկ-երկու օր առաջ դաստիարակը երեխաներին բացատրում է նպատակը, խնդիրները, երեխաների անելիքները: Առանց այդպիսի գործնականորեն ու հոգեբանորեն նախապատրաստության, էքսկուրսիան կդառնա աննպատակ ու անարդյունավետ:

Երեխաներին էքսկուրսիային նախապատրաստելու աշխատանքների մեջ մտնում են նաև կարգապահության պահպանման ուղղությամբ տարվող միջոցառումները, զրույցը այդ ուղղությամբ:

Քանի որ էքսկուրսիաները լինում են մոտավոր և հեռավոր, ուստի հեռավոր էքսկուրսիայի դեպքում պետք է խորհրդակցել նաև ծնողների հետ:

Էքսկուրսիայի նախապատրաստական աշխատանքների մեջ պետք է ներառել նաև մանկապարտեզի տնօրինությանը՝ էքսկուրսիայի անցկացման վայր և մյուս հարցերի մասին տեղյակ պահելը, էքսկուրսիայի պլանը հաստատել տալը, որպեսզի անհրաժեշտության դեպքում նրանք համապատասխան միջոցներ ձեռք առնեն փոխադրական միջոց տրամադրելու կամ պարապմունքների գրաֆիկը դասավորելու համար:

բ)Էքսկուրսիայի անցկացումը

Էքսկուրսիան սկսվում է նրանով, որ էքսկուրսիայի վայրում դաստիարակը ի մի է հավաքում բոլոր երեխաներին, հիշեցնում էքսկուրսիայի նպատակը, տրված առաջադրանքները, երեխաների անելիքներն ու պարտավորությունները:

Էքսկուրսիայի ժամանակ դաստիարակը երեխաների մեջ պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի օբյեկտը, որպեսզի երեխաները անհրաժեշտ ուշադրությամբ դիտեն այն:

Երկար քննարկումներից հետո որոշվում է էքսկուրսիայի օրն ու ժամը: Բոլորի տրամադրությունը բարձր է լինում: Երեխաները բարձր տրամադրությամբ դաստիարակի հետ ուղևորվում են դեպի էքսկուրսիայի վայրը: վերադառնում են բարձր տրամադրությամբ:

գ)Էքսկուրսիայի ամփոփումը:

Ամփոփումը կարող է տեղի ունենալ ինչպես էքսկուրսիայի վայրում, այնպես էլ մանկապարտեզում՝ նայած էքսկուրսիայի բնույթին և դաստիարակի հետապնդած նպատակներին: Այն կարող է բանավոր զրույցի, հարց ու պատասխանի , պատմելու բնույթ կրել, կարող է նաև հավաքած նյութերի(հերբարիումներ) ուսումնասիրության ձևով անցկացվել:

Վերջնարդյունքներ

Էքսկուրսիայի իրականացման գործընթացում երեխան պետք է՝

- Խոսի իր նվաճումների մասին
- Ճանաչի հիմնական հույզերը
- Ճանաչի տրանսպորտի որոշ տեսակներ
- Ճանաչի և անվանի ծառերի որոշ տեսակներ
- Ճանաչի թռչուններին և տարբերի
- Ճանաչի և անվանի որոշ կենդանիների և նրանց ձագերին
- Ճանաչի տարվա եղանակները և բնության որոշ երևույթներ
- Ճանաչի և անվանի որոշ սենյակային, պարտեզի, դաշտային ծաղիկներ
- Դրսևորի հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ և ճիշտ վարքագիծ բնության գրկում
- Ունենա պատկերացում հայրենի երկրի, մայրաքաղաքի, իր բնակավայրի /քաղաք, գյուղ/ մասին
- Ճանաչի հայրենիքի որոշ տեսարժան վայրեր
- Իմանա ազգային որոշ ծեսերի և տոների մասին

Եզրակացություն

Վերը նշվածից եկա հետևյալ եզրակացության.

Էքսկուրսիան այցելություն է դեպի տեսարժան վայրեր, թանգարաններ, բնություն՝ ուսումնական, կրթամշակութային նպատակներով: Էքսկուրսիաները կարևոր նշանակություն ունեն դաստիարակչական տեսանկյունից: Էքսկուրսիաները ընդլայնում են երեխաների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով:

Էքսկուրսիայի էությունը կայանում է բացատրությամբ՝ ցուցադրության, շրջագայության մեջ: Էքսկուրսիան կարող վարել դաստիարակը կամ էքսկուրսավարը, որոնց մեկնաբանմամբ երեխան սովորում է ճիշտ ընկալել իր տեսածը, ցուցադրածը: Էքսկուրսիայի ժամանակ դաստիարակը երեխայի մեջ պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի օբյեկտը, որպեսզի երեխաները անհրաժեշտ ուշադրությամբ դիտի այն: Բնության մեջ անցկացվող էքսկուրսիաները լակն հնարավորություն են տալիս շփվել հասակակիցների և մեծահասակների հետ:

Էքսկուրսիաները նպաստում են երեխաների հայրենասիրական ոգու բարձրացմանը, զուգահեռ նրանց մեջ սերմանում է սեր և հարգանք մեր կրոնի, ծիսակարգերի նկատմամբ:

Էքսկուրսիաները շատ կարևոր են այն առումով, որ երեխան կարևորում է իրեն փոխանցված պատմամշակութային ժառանգությունը, դառնում է նրա կրողը և փոխանցողը հետագա սերունդներին:

Գրականություն

1.Թութունջյան-
<<Կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները>>: 1962թ.

2. Ա. Տեր-Գրիգորյան - <<Գործնական աշխատանքները բացատրական ընթերցանության դասերին >> :1963 թ.

3.<<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես 2014թ.

4.<<Основы дидактики>>. 2007թ.

5.М. А. Данилов, Б. П. Есипов - << Дидактика>>,<<Метод екскурсии>>.1957г.

6.<<Народное образование>>.2012г.

7. Яковленко Л. Петриновна - << Методика организации екскурсии в начальной школе>> 2014г.